

Ճաշու ժամերը «զատ եւ որիչ ի միմեանց յիւրաքանչիւր նշանակեալ ժամու ասէին» :

Ճաշու ժամէն ետքը կ'ելլէին Պատարազի . «զարարողութիւն Պատարազին դպրօք եւ սարկաւազօք մատուցանէին . եւ իւրաքանչիւր ոք իւրովք նշանակեալ զգեստուքն» :

Դաւրիժեցւոյ հաղորդած այս մանրամասնութիւններէն կ'իմացուի թէ Արեւելեան Հայաստան թուլացած էին ժամասացութեան այս կարգերը , այս պատճառաւ ալ հարկ տեսնուած է մասնաւոր հրահանգներով վերհաստատել զանոնք : Դաւրիժեցի կ'աւելցնէ թէ «ա՛յս են յայտնի կարգ եւ սահմանք նոցա , զոր վերոյասացեալ վարդապետքն սահմանեցին երկոքին արամբքս» . այսինքն Մովսէս եւ Պօղոս վարդապետներու մատնացոյց ընելով պարտադիր ըրին Սարգիս եպիսկոպոս եւ Կիրակոս իրենց միաբաններուն :

Թէ Մովսէս վարդապետ մեծ մասնակցութիւն ունեցած է այս բարեկարգական որոյմանց մէջ յայտնի կը տեսնուի էջմիածնի թ . 2413 ձեռագրէն , ուր (էջ 846—870) կը գտնեմ «Օրհնութիւնք եւ քաղուածք տօնից եւ տէրունականաց եւ ամենայն սրբոց , զոր սահմանեաց սուրբ հայրապետն Մովսէս ի փառս Աստուծոյ» : Այս գրուածքը համառօտ ցուցակ մըն է Օրհնութեանց եւ անոնց կից երգեցուելիք քաղուածքներու . սկիզբն է . «գլ . Երգեցէք որդիք Սիոնի : [Քաղ .]՝ Էակից Հօր եւ Հոգւոյն . . . » : Ուրիշ ձեռագիրներ կ'ընծայեն զայն Ղուկաս Կեղեցւոյ , այսպէս Չմմառի